

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի 26.02.2018 թ. թիվ 122 Լ/Կ հրամանի

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

ԿԱՐԳ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 2 22.02.2018թ.

Վանաձոր

2018թ.

1. Սույն կարգով սահմանվում է «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) աշխատողներին արտասահմանյան գիտական գործուղումներ տալու գործընթացը՝ միջազգային գիտաժողովին, գիտական կոնֆերանսին, սեմինարին (այսուհետ՝ գիտական միջոցառում) մասնակցելու համար:
2. Գործուղում տրվում է, եթե առկա է գիտական միջոցառման կազմակերպչի հրավերը և/կամ գիտական միջոցառման ծրագիրը (օրակարգը) և աշխատող(ներ)ի դիմումը, որը կցվում է Համալսարանի ռեկտորին ուղղված դիմումին՝ հայերեն թարգմանության հետ միասին:
3. Համալսարանի գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտորը փաստաթղթերը ստանալուց հետո Համալսարանի ռեկտորին ներկայացնում է առաջարկություն՝ աշխատողի գիտական գործուղմանը հավանություն տալու կամ չտալու մասին: Գործուղումը ձևակերպվում է Համալսարանի ռեկտորի հրամանով:
4. Ճանապարհածախսի հատուցում տրվում է միայն այն աշխատողներին, որոնք զեկուցումով հանդես են գալու գիտական միջոցառմանը:
5. Արտասահման գիտական գործուղում տալու դեպքում Համալսարանը տրամադրում է ճանապարհածախսի հատուցում՝ ոչ ավելի 200 (երկու հարյուր) հազար ՀՀ դրամից: Երկու և ավելի համահեղինակների գործուղման դեպքում Համալսարանը համահեղինակների խմբին տրամադրում է ճանապարհածախսի հատուցում՝ ոչ ավելի 400 (չորս հարյուր) հազար ՀՀ դրամից, որը պետք է հավասարապես բաշխվի նրանց միջև:
6. Գործուղվող աշխատողին ճանապարհածախսի հատուցումը տրվում է գործուղում մեկնելուց առնվազն մեկ օր առաջ: Գործուղումից վերադառնալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, աշխատողը պարտավոր է ներկայացնել ճանապարհածախսը հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև գրավոր հաշվետվություն Համալսարանի ռեկտորին՝ գիտական միջոցառմանը մասնակցելու մասին:
7. Գործուղված աշխատողի կողմից գիտական միջոցառմանը չմասնակցելու, ճանապարհածախսը հաստատող փաստաթղթերը կամ գիտական միջոցառմանը մասնակցելու հաշվետվությունը չներկայացնելու դեպքում տրամադրված գումարը ենթակա է վերադարձման:
8. Յուրաքանչյուր ֆինանսական տարում մեկ աշխատողի Համալսարանի ֆինանսական միջոցների հաշվին ճանապարհածախսի հատուցմամբ գործուղում տրվում է արտասահմանյան առավելագույնը երկու գիտական միջոցառման համար:
9. Սույն կարգի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Համալսարանի գիտական խորհրդի կողմից 25.06.2015թ. ընդունված «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցներին գիտական գործուղումներ տալու կարգը»: